ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (ՀԿ)
SPECIAL TOPIC: GLORY (OT)

I. Հիմնական նշանակությունը՝

Գոյություն ունեն քսանից ավելի եբրայերեն բառեր, որոնք թարգմանվում են «փառք» (*doxa*) LXX-ի կողմից, սակայն ամենանշանակալի եբրայերեն տերմինը *kabod* է (BDB 458-459, KB, 455-458): Դրա հիմնական նշանակություն է «ծանր»: Այն առևտրի հետ կապ ունեցող տերմին էր և կիրառվում էր վաճառքի գործարքների ժամանակ (այսինքն՝ կշեռքները): Այն սկսեց ունենալ ավելի ընդարձակ ստուգաբանություն, որտեղ ծանր հասկացությունը կատարելագործվեց դառնալով կշիռ, մարդկային արժեքներ, վայրեր և առարկաներ:

II. ՅԱՀՎԵՅԻ համար կիրառությունը՝

Ա. Այն դարձավ ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությունը նկարագրելու միջոց: Այն համադրում է Նրա զորությունը, մեծափառությունը (այսինքն՝ գերբնականը) ֆիզիկական իրականության մեջ Իր անհատականության և ներկայության հետ (այսինքն՝ Իր էությունը):

Բ. Մատնանշում է ՅԱՀՎԵԻՆ արարչագործության մեջ, տես՝ Սաղմ. 19:1, 29:3,9, 104:31

Գ. Կիրառվում էր Իր ուխտի ժողովրդի ձևավորման հետ կապված աստվածաբանության համար: Նա է «Իսրայելի փառքը», տես՝ 1 Թագ. 15:29:

1. Եգիպտոսից ելքը /Ելիցը/, տես՝ Թվոց 14:22 (կանխասված Ծննդ. 15:12-21-ում)
2. փառքի հատուկ ամպի մեջ, որն առաջնորդում և ուղեկցում էր ժողովրդին, տես՝ Ելից 16:7,10
3. Սինա լեռան վրա Օրենքի տրվելը, տես՝ Ելից 24:16,17
4. Իր մատակարարումն ու դատաստանը անապատում դեգերելու տարիներին՝
   ա. տասներկու լրտեսների հետ կապված առաջին ապստամբությունը, տես՝ Թվոց 14:9-10
   բ. Մովսեսի բարեխոսությունը նրանց համար, տես՝ Թվոց 14:20-21
   գ. Կորխի ապստամբությունը, տես՝ Թվոց 16:19
   դ. ջրի ճգնաժամը, տես՝ Թվոց 26:6

Դ. ՅԱՀՎԵԻՆ տեսնելու Մովսեսի խնդրանքը, տես՝ Ելից 33:18-23

Ե. Այն կիրառվում է հենց ՅԱՀՎԵԻ համար (այսինքն՝ Իր էության)

1. 1 Մնաց. 29:11
2. Սաղմ. 106:20, Երեմ. 2:11, Ովս. 4:7, Հռոմ. 1:23
3. Եսայի 42:8, 45:7, 48:11, 58:8, 60:1-2,19 (Հայտն. 21:23, 22:5)
4. Զաք. 2:5,10

Զ. Այն կիրառվում է ՅԱՀՎԵԻ ներկայության համար՝

1. Խորանում, տես՝ Ելից 16:7,10, 29:43, 40:34-34, Ղևտ. 9:6,23
2. Տաճարում, տես՝ 3 Թագ. 8:11, 2 Մնաց. 5:14, 7:1-3, Ես. 6:3, Անգ. 2:3,9
3. Ուխտի Տապանակի վրա, տես՝ 1 Թագ. 4:22, Սաղմ. 63:2, 78:61

Է. Այն կիրառվում է ՅԱՀՎԵԻ թագավորության համար, տես՝ 1 Մնաց. 29:12-13, Սաղմ. 24:7-10, 45:3

Ը. Այն կիրառվում է ՅԱՀՎԵԻ բարոյական էության համար (այսինքն՝ արդարությունը), տես՝ Սաղմ. 29:3, 97:6, Ես. 42:8, 48:11, 58:8, Ամբ. 2:14

III. Մարդկանց և ազգերի համար կիրառությունը՝

Ա. մարդիկ

1. համազոր է «շնչին» (այսինքն՝ *nephesh*), տես՝ Ծննդ. 49:6, Սաղմ. 16:9, 108:1
2. հարստություն, տես՝ Ծննդ. 31:1, Սաղմ. 49:16,17, Ես. 10:3, 61:6, 66:11-12
3. պատիվ, տես՝ Ծննդ. 45:13, Սաղմ. 8:6, Անգ. 2:7
4. հեղինակություն, տես՝ Հոբ 19:9, 29:20, Սաղմ. 4:2, 49:17

5. մեծափառություն, տես՝ 1 Մնաց. 29:12,28, 2 Մնաց. 17:5, 18:13, 32:27

Բ. ազգերը
1. Եգիպտոս,
2. Եփրեմ, տես՝ Ովս. 9:11
3. Սամարիա, տես՝ Ովս. 10:5

Գ. թագավորները
1. Ասվերոսը, տես՝ Եսթեր 1:4
2. Իսրայելը, տես՝ Սաղմ. 21:6
3. Անտիոքուս IV, տես՝ Դան. 11:39

Դ. ազգային բանակները՝
1. Ասորեստան, տես՝ Ես. 8:7
2. Իսրայել, տես՝ Ես. 17:4
3. Կեդար, տես՝ Ես. 21:16

IV. Կիրառվում է վերջին օրերի (էսկատոլոգիա) նկարագրություններում՝

Ա. ՅԱՀՎԵՆ վերադառնալու է Իր նոր տաճարը, տես՝ Եզեկ. 43:2,4,5, 44:4

Բ. ՅԱՀՎԵՆ աշխարհը դեպի Իրեն է քաշելու, տես՝ Ես. 40:5, 59:19, 60:1-3, 66:18-19

Գ. ՅԱՀՎԵՆ իջեցնելու է «նոր» Երուսաղեմը, տես՝ Ես. 66:10, Զաք. 12:7

V. Արարչագործության նպատակը ՅԱՀՎԵԻՆ փառավորելն է

Ա. ստեղծված է Իր փառքի համար, տես՝ Ես. 43:7

Բ. Նրան արժանի փառք, տես՝ 1 Մնաց. 16:29

Գ. երգել, փառաբանել Նրա փառքը, տես՝ Սաղմ. 66:2, 96:8, 115:1

Դ. ամեն ինչ, որ անում ենք, անում ենք Նրա փառքի համար, տես՝ 1 Մնաց. 10:31, 2 Կորնթ. 4:15, Եփ. 5:22, 6:5, 1 Պետ. 2:12

Ե. Westminster Shorter Catechism-ի առաջին հայտարարությունը: